

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Ներկայ 1897 տարեշրջանի Պոչկարիոյ համար տարեկան 10ֆր " " " 1/2 " 5 " Արտասահմանի համար " 12 " " " 1/2 " 6 " " կանխիկ վճարելի	Նամակ դրամ եռսյուն խրվել հետեւեալ հասցեով ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ) Редакция на вѣстникъ „Иравункъ“ ВАРНА (България).	Rédaction du journal „Iravounk“ VARNA (Bulgarie)	Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք եւ չեն դրկուիր եւ յարմար դատ- նաճենքն միայն կը հրատարակ- ուին ամբողջովին կամ մասամբ: Ծանուցմանց տողը 20 սանրիւն. երեքէն առելի անգամներու համար 20 առ 100 զեղը կը լինի:
---	--	--	---

ԶԳԱՍՏԱՑՈՒՄ

Գեղեցիկ, զովացուցիչ լուրեր
կը հասնին այս օրերս այն ամեն
կողմերէն ուր մեր որբութեան ճա-
կատագիրը վճռուելու դատապար-
տուած է: Ինչպէս կերեւայ այլ եւ
այլ ակներեւ ու անկեղծ յայտա-
բարութիւններէ, օտարութեան
գրկին մէջ իրենց կեանքին ու հոգի-
ին սնունդ գտնելու բռնադատուող
մեր մատաղատի որբերը այլ եւս
զերծ պիտի մնան կրօնական դը-
ռեհիկ, անհարկէ կաշկանդումն-
րէ, չպիտի ենթարկուին այն հա-
ւատաքնական խտրութիւններուն,
որոնց գաղափարը սոսկում և
զարհուրանք կը պատճառէ, տաս-
ներեակորդ դարուն աչքախար
չպարին ներքեւ իսկ:

Մեզի համար ամէն տուրակոյսէ
զերծ է օտար կրօնական դաւա-
նութիւններուն սա սեւեռային նը-
պատակը, որ ծնունդ առաւ մեր
արդի շուարուն կացութենէն:
Թուրքին ոչնչացնող մագիլներէն
կորզել որբերու ստուար բռնակ
մը, և զանոնք փրկել ոչ միայն
մարմնապէս, հոգեւորապէս ալ,
հանելով անոնց վրայէն լուսաւոր-
չի եկեղեցիին լոյսը:

Եւ արդէն ճիշդ ժամանակն էր
ասանկ գաղափար մը յղանալու:
Երբ հայ ընկերութեան գունդեր
բացէ բաց անհետ կըլլան քաղա-
քակրթութեան լայնաբեր աչքին
առջեւ, երբ գալլէն հաւածուած
ոչնարի մը գահալիժամբը հայը
ծակէ ծակ կը փախչի միայն անձ-
նապաշտպանութեան բնազդէն մըղ-
ուած, միտքէն իսկ չանցնելով
խորհիլ իր ցանուցիր մատաղ սե-
րունդին գոյութեանը վրայ, կը
վալլէ՛ր որ Գրիստոսի հովանիին
տակ ապրող կրօնական տարբեր
դաւանութիւններ անգործ հանդի-
սատես ըլլային, առանց օգուտ
քաղելու այս ողբալի վիճակէն:
Շատ դժուար չէր հաւաքել, պա-
տասպարել, սնուցանել այնպիսի ա-
րարածներ որոնց պաշտպանը Աստ-
ուած էր միայն:

Եւ ըրին ինչ որ մտածեցին:

Գործադրութիւնը չյապաղեցաւ:
հայ որբերը, հնարքներու ծուղակի
մը մէջ բռնուած, սկսան բռնել
զիրենք գրկող բուն հոսանքէն:

Բայց յետագարձ ուժգին շար-
ժում մը տեղի ունեցաւ յանկարծ,
որ անշուշտ ապշեցուց կրօնափո-
խութեան հերոսները: Հայը վեր
կանգնած էր զայրագին, արիւնա-
ցայտ աչքով, ահարկու:

Աղաղակ մը, երկտրական հո-
սանքի պէս տարածուն և ցնցող,
վեր բարձրացաւ. «հէ, ո՛ւր կը
տանիք մեր որբերը, ապագայի
մեր միակ յոյսերը. անոնք պէ՛տք
են մեզի»:

Միտքնարին հաշիւը սխալ եւ-
րած էր:

Հայը կարծուածին չափ միամիտ
ու շուարած չէր:

Օտար բարեգործներու ընթաց-
քին մէջ սկսաւ քիչ քիչ մեղմա-
ցում մը առաջ գալ. վերջապէս
անհնարին էր ընդգիմանալ այն-
պիսի մարդոց որոնք մեծագոռ
ձայնով կը պոռային իրենց իրաւ-
ունքը: Այս բարեգործները հաշիւ
ըրած չէին որ հայը, հեզաբարոյ,
կատարած առիւծ կը կտրի երբ իր
կրօնքին դէմ յարձակում տեսնէ:

Կրօնական կաշկանդումը, որուն
մէջ կը խղզուէր հայ որբը, սկսաւ
թուլնալ: Հիմակ թէ՛ օտար եր-
կիրներու հաստատութեանց մէջ
պատասպարուող, և թէ՛ հայրենի հո-
ղին վրայ բարեբարուող հայ ման-
կտին մատմբ զերծ կը գտնուի
այն անորակիլ փորձերէն որոնք
կը սպառնային անհետացնել ամ-
բողջ սերունդ մը:

Բայց, կրօնական ու ազգային
աւանդութեանց տեսակէտով ցոյց
տրուած այս աղատութենէն պէտք
չէ շլանանք, ու օտար բարեգործին
անկեղծութեանը կուրօքէն վստա-
հինք. մեր պարտքն է, նուիրա-
կան անմերձելի պարտք, յարա-
ժամ արթնութեամբ հսկել մեր
հեռուի ու մօտի որբութեան վրայ,
որ մեր ապագայի էն ամուր ու
հոյաշէն սիւնը պիտի կազմէ:

Ե.

ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ

Հայ արհեստաւորը և վաճառա-
կանը, ամեն ատեն, ազգին լաւա-
գոյն տարրերէն մին կազմած են:
Թէ՛ հայը ի ինչ անուրանալի հան-
ճար ու ներութիւն ունի որով կը
փայլի այս երկու աւագ ճիւղերուն
մէջ, այնպիսի ճշմարտութիւն մըն
է զոր ստիպուած են խոստովանե-
լու նոյն իսկ օտարազգիները:

Այսպէս, տեսնուած է թէ բոլոր
այն կեդրոններուն մէջ, ուր հայը
հոծ բազմութիւն կը կազմէ, միշտ
գիտցած է, իր ճարպիկութիւնով,
առաջին տեղը բռնել տնտեսի ար-
ուեստից և վաճառականութեան
մէջ:

Թուրքիոյ մէջ, պայտառն ու
կերչապետէն սկսեալ մինչեւ յե-
տին կողարարը մեր ազգակից-
ներն էին, զիրք մը նախանձելի
զոր գրաւել գիտցած են այն խը-
նամքով զոր գրած են հաւանցնելու
իրենց արտադրութիւնը. նոյնը
գրեթէ նաեւ հայ վաճառական-
ները:

Հայ արհեստաւորին բնածիր ար-
ժանիքը մանաւանդ սա կէտէն կը
ցայտէ որ իր գործերուն մէջ զուրկ
է այն կատարելագործեալ միջոց-
ներէն, մեքենաներէն, որոնք եւ-
րոպացի գործաւորին գլխաւոր օ-
ժանդակներն են: Նա մանաւանդ
կապրի այնպիսի միջավայրի մը մէջ
ուր տաղանդը երրորդական քովա-
լերութիւն մը միայն կը գտնայ:
Թո՛ղ բարբարոս կառավարութեան
մը կեղեքումները, կաշկանդում-
ները և ամեն տեսակ սնուի ա-
րարքները:

Այնպէս որ հակառակ այս ան-
նպատ պայմաններուն, առանց
չատ անգամ նոյն իսկ տեսած ըլ-
լալու այն վարպետները, զպրոց-
ները, թանգարանները ուր ուղեղը
այնքան կը զարգանայ և կը ներ-
շնչուի, հայը, մինչեւ այսօր, այն-
քան յարմարութիւններու ապա-
ցոյցը տուած է, որ յաճախ օ-
տարազգիներու պատկառանք և
ապշուովիւն պատճառած է:

* * *

Վերջին տարիներու թրքական

ահաւի վայրագութիւններէն, ինչ-
պէս հայ վաճառականը, նոյնպէս
ալ արհեստաւորը մեծ վնասներու
ենթարկուած է: Բացի անոնցմէ
որոնք աշխատութեան վայրկեանին
իսկ չարաչար սպանուեցան իրենց
խանութներուն մէջ, մէկ մասն ալ
ցիրուցան եղաւ այլեւայլ տե-
ղեր, գլխաւորապէս Եգիպտոս և
Պուլկարիա:

Հայ արհեստաւորին և վաճառա-
կանին յաջողութեան գաղտնիքնե-
րէն մէկը, ապահովապէս իր պար-
կեշտութիւնն է:

Իրաւ է թէ ետքի տարիները,
վստահութեան զեղծումներ թե-
րեւ յաճախակի էին Պոլսոյ հրա-
պարակի վրայ, բայց պատուաւորու-
թեան դարաւոր համոզումը այն-
քան խոր արմատներ թողած էր
ամենուն վրայ, որ այսպիսի պա-
րագաներ գիպուածական կը հա-
մարուէին և չէին կրնար վնասել
ամբողջութեան:

Նոյնը չէ ամեն տեղ:

Բոլոր անոնք որ նոր գործ մը
հիմնած են օտար հրապարակի մը
վրայ, պէտք է սկսին այնպէս,
ինչպէս իրենց հայրերը սկսան
Թուրքիոյ մէջ. այսինքն՝ առանց
զեղծումի և այնպիսի պայմաննե-
րով, որոնք լիովին գոհ թողուն
այն տարրը որուն հետ իրենց
անդրանիկ գործերը կը կնքեն և
որոնցմէ ամբողջ ապագայ մը կա-
կընկալին:

Այն հայ արհեստաւորը կամ
վաճառողը որ բանի մը խեղճուկ
լէվերու կամ սանդղիմներու համար
ոտնակոխ կընէ պարկեշտութեան
ոգին, ո՛չ թէ միայն պատուոյ
հակառակ գործած կըլլայ անշուշտ,
ո՛չ թէ միայն ինքը անձամբ կիյ-
նայ նիւթապէս և բարոյապէս, այլ
նաեւ այդ անկման մէջ, իր հետ
կը քաշէ իր բոլոր ազգակիցները
որոնք նոյն միջոցներով կը շահէին
իրենց ապրուստը:

Ահա հոգ է վտանգը:

Մէկուն անպարկեշտութիւնը ա-
մենուն վրայ կը ժայթքէ. ինչպէս
նոյնին պատուաւորութիւնը բա-
րեք մը պիտի ըլլար ամենուն:

Իր առաջին քայլերուն մէջ, և
թէ հայ արհեստաւորը կամ վա-

ճառողը ուղղութեան ճամբէն չեղի, եթէ հոս՝ մատանի մը քարը թուցնէ, հոն՝ տրամ մը ոսկի սղոցէ իբր առաւելական շահ մը որ աչք չի հաներ, եթէ վտիտ ձողերով խայտառակ վանդակորմ մը կերտէ և կամ տուն մը ներկէ զայն ծիծաղելի գրութեան վերածելով, վերջապէս եթէ ձեռնածուի փորձեր ընէ կտաւը չափելով և կամ յոռի տեսակէ ապրանքներ քշէ, անշուշտ տեղացին զայրացած, հմայաթափ՝ պիտի զոռւշանայ մէկ մըն ալ հայու հետ գործ ընելու, անոր վստահելու, և իր համոզումը ներք փայլակի արագութեամբ պիտի տարածուին այս փոքրիկ հրապարակներուն վրայ ի լուր ամենուն:

Այս տեսակ ձախող սկզբնաւորութիւն մը անշուշտ չի կրնար թուիլ տալ հայ աշխատաւորին թեւերուն, ընդհակառակը կը խափանէ զանոնք, նոյն վնասով պարտելով նաեւ բոլոր անոնք որ պատուաւորութեան մէջ կը փրկուեն ամեն ճամբիտ շահ և յառաջդիմութիւն:

Հարկ է աւելցնել թէ ամեն հայ արհեստաւորի կամ փոքր վաճառականի, որ օտար երկրի մէջ գործելու կը միտի, առաջին պարտքը պէտք է ըլլայ գէթ, ի սէր արհեստակցաց և ազգային պատւոյ նախանձախնդրութեան, այնպիսի պատուաւոր ընթացք մը բռնել, և առանց փոքրիկ զոհութիւններէ փախչելու՝ այնքան փութկոտութիւն գնել յաճախորդները գոհ ընելու, որ հայ արհեստաւորը և վաճառականը, միշտ և ամեն տեղ, առաջնակարգ և իրենց արժանաւայել գիրքը պահեն:

Գրանք-Արշալիր

ՀԱՅԵՐՆ

Ի ՏԱՐԱԽԱՅՆ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Ա.

ՊՈՒՐԿԱԶ

(Շար. նախորդ թիւի)

Կարժէ քանի մը խօսք ըսել գաղթականներուն նպատի գործին մասին որ Պուրկազի մէջ կանոնաւորութեամբ, անկողմնակալութեամբ և չրջահայեցութեամբ կատարուած ըլլալով, բնաւ տեղի տուած չէ ցոյցի կամ բողոքի գաղթականներու կողմէն:

Եւրոպացի մարդասէրներու ժամանակէն առաջ Պուրկազի ազգայինները նպատամատոյց յանձնաժողով մը կազմեր են 7 հոգիէ բաղկացեալ որ անմիջապէս հանգանակութեան մը ձեռնարկելով՝ անոր արդիւնքով սկսեր է օրական 30 հաց բաշխել համոզ գաղթականներուն. ասոնք նախ սակաւաթիւ էին, բայց հետզհետէ բազմացան, այնպէս որ երբ Գուէլքըրներու կողմէն Միսս Ալէն, Ուէսթմինիսթրի դուքսին

կողմէն Մ. Գլարք Պուրկազ եկան՝ բաշխուող հացին թիւը հասաւ օրը մինչեւ 200 ի. Եկան նաեւ Սըր Արթուր Հէյթըր և հազարապետ Սարթուր և նպաստ բաժնուեցաւ չորս ճիւղի, հաց և ապուր, բնակարանի վարձք, հագուստ ու կոշիկ:

Նպաստը կը բաշխուէր Յանձնաժողովին ձեռքով, սրուն գործակատար գրադիրն էր Տ. Յարու. թիւն Գալֆայեան, կեսարացի գաղթական: Յանձնաժողովը իր պաշտօն շարունակեց քանի մը ամիս, բայց երբ ժողովուրդին մէջ քննադատութիւններ սկսան յանձնաժողովին դէմ, սա խոհեմութիւն սեպեց հրաժարիլ և հաւաքակ իրեն եղած թախանձանքներուն չուղեց ետ առնել իր հրաժարականը:

Նպաստի գործին հոգը և պատասխանատուութիւնը այնուհետեւ ծանրացաւ զիւստապէս Տ. Գալֆայեանի վրայ, որ յանձն առաւ տնօրինել, կարգադրել ամէն բան՝ սա պայմանով սակայն որ գրամի գործողութիւնը իր ձեռքով չկատարուի, այլ յանձնուի Մ. Գլարքի ներկայացուցիչին, որ բողոքական Պուրկազ մըն է:

Եւ եթէ ըսեմ որ այս կարգադրութեանն այսինքն, փետրուարի սկիզբէն ի վեր մինչեւ այսօր բողոք կամ տրտունջ մը տեղի ունեցած չէ, ինքնին կը հասկցուի թէ նպատի բաշխումը որքան մտացի, աշխույժ և խնամոտ աշխատութեամբ կատարուած է, բան մը որ եթէ Օրիորդ Ֆրայզըրի շուրջ պատող անձերուն քով ալ գտնուած ըլլար, վառնաի մէջ այնքան տխուր և անհաճոյ տեսարաններու հանդիսատես չպիտի ըլլայինք կարծեմ:

Նպաստը մինչեւ այսօր դադարած չէ, տակաւին օրը 30-35 հաց կը տրուի կարօտեալներուն, նաեւ երբեմն անոնք փոքրիկ տըղաքներու համար, քիչ մըն ալ տան վարձք:

Գրեթէ 15 ընտանիք կը պատասխարուին այն շէնքին մէջ զոր նպատամատոյց մարդասէրները յատկապէս հայ գաղթականներու համար շինել տուին 300 անգլ. ոսկի ծախսելով:

Գաղթականներու թիւը երբեմն բարձրացած էր 1500 ի, որոց մէկ մասը ցրուած գացած է ուրիշ տեղեր, ուրիշ մաս մըն ալ Պուրկազի մէջ իրեն ապրուստի միջոց գտած:

Չմոռնամ յիշելու թէ կառավարութիւնը այստեղ գաղթականներուն մասնաւոր բժշկ մը յատկացուցեր էր, (տօքթ. Արապեան) և ձրի կը հայթայթէր հիւանդներուն դեղերը:

Այս տեղեկութիւնները ամբողջացուցած ըլլալու համար պարտիւ աւելցնել թէ Միսս Ալէն թաղիքի գործարան մըն ալ բացած էր

ուր գաղթական կիներ և աղջիկներ կաշխատէին օրէքով:

Բ.

ԵԱՆՊՈԼ

Երկաթուղին չորս ժամուան մէջ կը փոխադրէ մեզ Պուրկազէն Եամպօլի կայարանը, ուսկից բաղաձ Երթալու ժամանակ կը ստիպուինք կառօք և երիվարօք նորաշէն մակոյկի մը մէջ մտնել անցնելու համար թունճա գետու կէն որ Եանպօլի առջեւէն կը հոսի և որուն կամուրջը ամբողջովին քշուած տարուած է վերջին հեղեղային անձրևներէն:

Եամպօլ ունի 18500 բնակիչ. հայ ընտանիքներու թիւն է 20, նոյնքան ալ ամուրի պանտոխտներուն. առաջիններէն վեցը, իսկ վերջիններուն կէսը, նոր գաղթականներ են: Տեղացիք՝ ընդհանրապէս խանութպան և արհեստաւոր, նիւթապէս միջին դիրքի տէր և դիւրակեցիկ են, իսկ կարօտ գաղթականները այժմ գէշ աղէկ զբաղում գտած են իրենց օրապահիկը ճարելու համար:

Ընտանիքի մայրերէն եօթը օտարազգի են, Պուրկազ, Յոյն են, զոր հայ երիտասարդներ իրենց կին ընտրած են. այս պարզան ինքնին այնքան մեծ նշանակութիւն չպիտի ունենար, եթէ Եամպօլի մէջ գտնուէին հայ եկեղեցի մը և դպրոց մը, սակայն ասոնց երկուքն ալ կը պակսին ու տանի չափ հայ տղաներ ու աղջիկներ կը յաճախեն օտար վարժարաններ, զրկուած մնալով մայրենի լեզուի ուսումէն և ազգային կրթութեան ուրիշ տարրերէն:

Եթէ Եամպօլի մեր ազգակիցներուն միջեւ համերաշխութիւն կենար, կրնային համեստ ամսաթուղով մը հայ վարժապետ մը ունենալ, որ մայրենի լեզուի, տոհմային պատմութեան և ազգ. եկեղեցւոյ դաւանութեանց ու արարողութեանց գոնէ նախնական տարերքը սորվեցնէր իրենց դաւաններուն: Բայց ոչ միայն համերաշխութիւնը իր բացակայութեամբ կը փայլի այստեղի հայերուն մէջ, այլ և իրենց մէկ մասը վարակուած է քէնով և հաւառակութեամբ իրարու դէմ:

Իրերու այս վիճակը եթէ շարունակուի, տխուր ապագայ մը կը սպասէ Եամպօլի փոքրիկ հայ գաղութին:

Գաղթականներուն օգնելու գործին մէջ Եամպօլի ազգայիններն ալ ունեցած են իրենց բաժինը: Բազմաթիւ գաղթականներ Պուրկազ պետական երկաթուղիով Պուրկազէն մինչեւ հոս ձրի գալէ ետքը, օգնութեան կարօտ եղած են իրենց ճամբան շարունակելու համար մինչեւ Փ. Պօլիս կամ ուրիշ, վասն զի Եամպօլէ սկսած՝ երկաթուղիի գիծը սեփա-

կանութիւնն է Հիւրի ընկերութեան, որ մօտ երկու ամիս միայն հայ գաղթականները ձրի փոխադրած է, իսկ անկէ ետքը գաղթեցուցած էր այդ շնորհը: Հետեւաբար Եամպօլի հայութեան վրայ ծանրացեր է խեղճ գաղթականներուն ճամբու ծախքը հոգալու գործը. այս նպատակով հանգանակութիւններ կատարուած են այստեղ, որոց գումարը կը հասնի 1500-1600 ֆրանքի: Ասկէ վատ Եամպօլի մեր ազգակիցներուն մէկ մասը անհատապէս օգնած է գաղթականներուն, անոնց ամէնէն չբաւորներուն առժամապէս հայթայթելով անոնք և բընակութիւն:

ՆԱՍԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

... խմբագիր

Շարաթ աւուր պատ. թիրիք մէջ՝ Արծրունեան վարժարանի նկատմամբ եղած յայտարարութիւնը կարգացի. իբր բացատրութիւն բացակայութեան՝ կը խնդրեմ հաճիք ներկայս հրատարակել իւր տրգոյ ընթերցողաց: Կը սիրեմ Աղգն և մերադէտից ամէն դասակարգի մեծարգոյ պաշտօնեաները և յարգելի անձ. նաւորութիւնները, և ինչպէս որ ինձի պատիւ կը սեպեմ ըստ ամենայնի զոհողութեամբ անգամ պարտքս կատարելով զայնս պատուել, եթէ՝ բանաւոր արգելքներ չըլլան:

Խօսքս աւելի լուստարանելու համար յարմար կը գտեմ ձեր ուշադրութեան յանձնել այն գիրք որով Տ. Հ. Կիրճեան մեզ հրաւիրած էր:

Հրաւիր

Արծր. վարժարանի գորոցի հանգիսի, որ պիտի կատարուի վաղը՝ հինգշաբթի յուլիսի 3, Պուրկազական Զբօսարան, Հաճի Բանաբոյի դիմացը: Ծեսչութիւն Երանեան
2 Յուլիս 1897 Վառնա

Այժմ թող ներուի ինձ ըսելու թէ՝ յիշեալ այցաքարտէն հարցուցի Հանգիսին որ ժամուն սկըսուիլը, այլ նա չպատասխանեց: Եւ արդէն այցաքարտի ստորագիր Մեծ. Տեսուչ Պ. Կիրճեան չէ հաճած անգամ յիշել թէ՝ պէտք էր ըստ պատշաճ սովորութեան կամ ինք գար, կամ օգնական դասատուն, կամ գոնէ դպրոցի տնտեսը զրկէր վարժապետին՝ հոն առաջնորդելու, թերեւս նա չէր գիտեր թէ ուր է Հանգիսավայրը: Կամ Մեծ. Տեսուչը չը հաճեցաւ յիշել իսկ թէ «Աղգ. հանգիսներն, ինչպէս սովորաբար կըլլայ» վարժապետի պահպանիչով մը կը փակուէր» թէպէտ այպէս ըլլալը մեզ ալ փափաքելի էր:

Իսկ գալով աղօթելու մասին՝ ապաքէն ուր ուրեք գտնուիմ Աղգի բարօրութեանը անկեղծ փափաքողն եմ և երջանկութեան համար միշտ աղօթաբար:

ԳԻՈՐԳ ՎՐԻ. ՆԱԼԲԱՆՏԵԱՆ

6 Յուլիս 1897 Վառնա

ՌՈՒՍՃՈՒՔ

Մեր այսօրուան թիւին մէջ կը հրատարակենք նամակ մը և հանգանակութեան ցուցակի մը մէկ մասը զորս մեզ զրկած է Ռուս-ճուզի դպրոցաշինութեան յանձնաժողովը:

Արդէն մեր վերջին թիւով հրատարակուած երկու թղթակցութիւններ Ռուսճուզէ գրուած, կը ցուցունէին՝ մէկը յիշեալ հանգանակութեան կատարումը, և միւսը՝ դպրոցին տարեկան հարցաքննութեանց արդիւնքը երկու տողով, հեզնոտ բացատրութեամբ մը: Սյս վերջին նամակը կուղէր ըսել թէ տեղւոյն կրթական գործը յաջող ուղղութեան մէջ չի գտնուիր, թէ ոչ ուսուցչական դասը, ոչ ալ հոգաբարձութիւնը չեն կատարած իրենց պարտականութիւնը հանգիստ ստանձնուած փափուկ պաշտօնին: Այս իմաստով երկար թըղթակցութիւն մըն ալ ստացած ենք արդէն, որ շատ մաթ ու անհաճոյ գոյներու տակ կը ներկայացնէ կրթական գործն յիշեալ քաղաքին հայոց մէջ: Տարապալման երկուրթեանը պատճառաւ չհրատարակուեցաւ սոյն նամակ, որ թե-րեւս չափէն աւելի համեմուած էր յոռետես դիտողութիւններով:

Բայց կարծես ցրելու համար աննպաստ տպաւորութիւնը զոր մտքերու վրայ առաջ կը բերէ այսպիսի լուր մը, ահա Ռուսճուզ-ցիները դերազանց ապացոյցով մի կուգան հաստատել թէ իրենք ոչ միայն անտարբեր չեն կրթութեան գործին, հապա նոյն իսկ չեն վարանիր իրենց քսակին բերանը լայնօրէն բանալու ու ոսկիներու և լէվերու երկար շարքեր նուիրելու, որպէս զի վարժարանի մը կառուցման համար հարկ եղած գումարը գոյանայ:

Դրամ չխնայելու, նպաստ տալու այս առատաձեւն եղանակն իսկ բարոյական մեծագոյն հաւաստիքն է Ռուսճուզցիներու հոգածութեանը իրենց նորածիլ սերունդի մշակման համար:

Եւ, Ռուսճուզի ազգայիններու բոլորովին ասպնտական այս վարձուքին ի տես, չեմ կրնար բաղդատութիւն մը ընելու փափագէն զրկել ինքզինքս, ի մասին վառնայի և Ռուսճուզի, Պոլկարիոյ այս երկու կարեւոր կեդրոններու հայ տարրերուն միջեւ կեցած տարբերութեանը բարքերու ընդհանուր կազմուածքին և ազգայնութիւնը ըմբռնելու ու գործադրելու եղանակին միջեւ:

Բնականաբար ազգայնա-գետ կարգը ամեն պարագայի մէջ չէ-զոք դիրք մը կունենայ, իր կազմութեան բերմամբն իսկ անպատասխանատու ըլլալով: Վառնաի մշակեալ, զարգացած մասը, նոյն իսկ, եթէ չափազանցութիւն չըլ-

լար, բարձր դասակարգը—կարեւոր բացառութիւն մը միշտ յարգելով— ո եւ է առթիւ որ ազգային գոյն ունի, ցոյց կուտայ անտարբերութիւն մը, կը բռնէ արհամարհոտ ընթացք մը, մէկըմէկու ըրածին չհանելու յաւակնութեամբ փրօն, հոգ չէ թէ միւս կողմէ ազգային կամ թողալին գործերն երեսի վրայ կը մնան, նիւթապէս ու բարոյապէս կը փնտրուին. անձնական հակառակութիւն մը ի գըլուխ հանելու զոհացումը մեծ սփոփանք կը պարգեւէ:

Ռուսճուզի հայը գրէթէ զերծ կերեւայ այս թերութիւններէն. աւելի տողորուած է միաբանական ոգիով. գիտէ պահանջել հարկին մէկդի վանել անձնական ատկու-թիւն, և խորհիլ ազգին շահուն համար միմիայն:

Վառնացի վարժարան մը կառուցանելու համար կը սպասէ մէկ ու կէս տարի, դրամին մեծագոյն մասը սկստորաւ ըլլալով հանգերձ. պատճառ. վառնի կիրքերու բախումը կար որ ամ-լութեան կը մատնէ ամէն օգտաւետ գործունէութիւն: Ռուսճուզ-ցին նիւթական այս առաւելու-թիւնը չունենալով հանգերձ՝ այսօր իր ձեռքին տակ ունի շատ աւելի կարեւոր գումար մը որ միմիայն իր քսակէն ելած է. իր այս ընթացքին մէջ ոչ միայն ազգասիրութեան մեծ ապացոյց մը կայ, հապա աւելի մեծ ապացոյց մը ինքնօգնութեան որ կը տիրէ իր մէջ:

Ռուսճուզի մէջ կայ երիտասարդութիւն մը հռանդոտ, յաւէտ կոմ նուազ զարգացած, գործունեայ ու քաջաբերով: Վառնա ընկերային այս պարգեւէն զրկեթէ զրկուած է բոլորովին. երիտասարդութիւնը, փոքր բացառու-թեամբ մը, անլի ու ապարդիւն մաս մը կը կազմէ, որ չի յատկանշուիր զաւարտարանի ու է հզօր ձիրքով:

Վառնան նախանձելու է Ռուս-ճուզին:

Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պատիւ ունինք ծանուցանելու թէ, չուրջ չորս տարի առաջ տեղւոյս ազգային երկսեւ վարժարանաց շինութեան ու գեանին պատրաստութեան համար, ազգային ընդհանուր ժողովը, Յանձնաժողով ընտրեց մեզ: Գործին սկզբաւորութիւնը ինչ ինչ պատճառներով յետաձգուեցաւ ցարդ, բայց այժմ յանձնաժողովս հետեւեալ Տեղացի անդամակցութեամբ վերակազմուելով, որք են Յովհաննէս Արսլանեան, Մաթաթի Բէթէնեան, Յակոբ հաճի Ստեփանեան, Սարգիս Գուլում-ճեան, Յարութիւն Ասլանեան, Նիկողոս Քէստանեան, Գրիգոր

Կարապետեան, Յարութիւն Երամօֆ, Ստեփան փափաղեան, Զարուկ Խաչումեան, Նիկողոս Պետրոսեան, Գրիգոր Գուլում-ճեան, Փիլիպպոս Սարգեան, անմիջապէս բողոքեցաւ նպատակին իրազեկման յոյսով, հանգանակութեան ձեռնարկեցինք, հանգանակեալ գումարն ամեն երեք ամիսն անգամ մը չորս մասնա-վճարով վճարելի, որոց մին կան-խիկ: Ներկայիս Մեծտոյ նու-րատուաց առաջին ցանկը կը յը-զենք պատ. թերթիդ մէջ հրատարակուելու խնդրանք:

Հարկ է նաեւ յաւելուլ թէ, երկսեւ վարժարանաց գեանին ու շինութեան միջին հաշուով 50000 ֆրանցի գումարի մը պէտքը անհրաժեշտ է. տեղւոյս ազգայնոց թուոյն հետ բաղդատմամբ, թէեւ անհնարին կը թուի սոյն գումարը միայն աստ հանգանակութեամբ ձեռք բերել, սակայն գոհունակութեամբ կը յայտարարենք թէ, տեղւոյս ազգայինք սիրայօժար ու առատաձեւութեամբ հանգանակութեան կը մասնակցին, որոյ համար քաղցր պարտականութիւն կը համարինք Մեծ. նուիրատուաց հրապարակաւ մեր շնորհակալութիւններն յայտնել: Քաջայայտ լինելով թէ սոյն գովելի փափաքն ու հռանդը շարունակուելով, պիտի քաջալերեն մեզ ամէն տեսակ միջոցն, ընդ մտադրեալ նպատակին հասնելու ջանք ու աշխատութիւն չխնայել, որոյ իրադանացումը իրաւամբ Ռուսճուզի ազգայնոց փառքը պիտի լինի:

Տեղւոյս Ալին. Տիկնայք ու Օրիորդք, ինչպէս ազգօգուտ ա-մէն գործի մէջ, այս բարեպատեհ առթիւ ալ, սիրելի է մեզ յուսով թէ, ազգասիրաբար սիրով յանձն պիտի առնեն իրենց չը-նակին մէջ ալ արդիւնաւոր հանգանակութիւն մը կատարելով Յանձնաժողովս յղել արդիւնքը, որ ի կարգին պիտի հրատարակուի:

Մանք խորին յարգանքով ի գիմաց տեղւոյս Դպրոցաշինութեան Յանձնաժողովոյ Աստուգալի Աստուգալի Ն. Գ. Քեստանեան Յ. Ասլանեան 4/16 Յուլիս 97 Ռուսճուզ

Յանկանգանութեան մեծտոյ նու-րատու ճեարք վառն շինութեան տեղ-ւոյս ազգային երկսեւ վարժարանաց: 4/16 Յուլիս 1897 Ռուսճուզ

	Ար. լիք Ու. փ
1 Սարգիս Գուլումճեան	4000
2 Հաճի Կարապետ Ասլանեան	4000
3 Եղբարք Յովհաննէս Յարութիւն Ասլանեան	1000
4 Զարուկ Խաչումեան	500
5 Գրիգոր Գուլումճեան	300
6 Եղբարք Քէստանեան	200
7 Եղբարք Քիւրտեան	200
8 Թագուր Թագեանեան	100

9 Եղբարք Սարաֆեան	150
10 Գառնիկ Խոճիճեան	200
11 Ա. Գ. Սէմէրճ. Եղբարք	100
12 Սաչաւուր Սարգիսեան	40
13 Թագուր Կարապետեան	32
14 Յարութիւն Երամօֆ	300
15 Թէօ Փափաղեան	100
16 Էֆէ Խորասանեան	20
17 Մկրտիչ Մէճէճեան	60
18 Յակոբ Յարութիւնեան	24
19 Սարգիս Հեքիմեան	32
20 Յարութիւն Թէրզեան	100
21 Յան Յարութիւնեան	24
22 Օհան Երկանեան	12
23 Յովհաննէս Ալիքսանե.	12
24 Գէորգեան եւ Յովհանն.	100
25 Եղբարք Հ. և Ա. Սէթե.	200
Գումար	906 10900
(Շարունակելի)	

ՍԱՐԸ ՏԵՓԹԵՐ

Կէչէն հափթա Ֆրանսա հիւ-քիւմէթի՝ մէպուսլարա թէվի օ-լընմագ իչին Շարգ մէսէլէսին. տէն տօլայը սարը տէֆթէրինի թապ ու նէշը իթտի: Մէքթիւր տէֆթէրտէ միւնտէրիճ Կիրիտ մէսէլէսի հազգընտա էվրագըրէս. միյէլէրի թէտգըգ իտիլտիքտէ թիւրք հիւքիւմէթիին էն օլչագ տէրէճէտէ իճրա իթտիկի սախ. թէքեարլըզլարը էվրոգա էլիլէ-րին վէ գօնօլօլարըն լարօրթ վէ թէլէկրաֆլարը իլէ սապիթ օլմագտա տըր:

Կիրիտտէ իլթիլարըն էօնիւ. նիւ ալմագ իչին տէվլէթէրին թալէպի իւզրէ՝ Սուլթանըն գապուլ իթմիշ օլտըզը իսլահաթը մէվգըրի իճրայա գօնօլմագ իչին Կիրիտէ վալի թային օլընան Գարաթէօտօրի վէ պիլախէրէ Պէ-րովիշ բաշալարըն Վանեայա եէ. թիշմէլէրինտէն էվլէլ Սլմանպօ-տան վէրիլէն թալիմաթ իւզրէ, մէրգուլմ բաշալարըն առայա այագ պատըզլարը սաթտան իսլամլար իլթիլալ վէ իսեան չըզարուպ, մէճլիսի ումումինին թէճէմիւսի. նէ մանի օլմագա վէ խրիսթի-յան վալի իսթէմէլիզ տէյու թէհ-տիտամիզ եաֆթալար եարըշալը-մագա վէ նիհայէթ Գանեա, Գան-տիա վէ Բէթիմօ չէհիլէրինտէ գըրկընլար թէշթիլինէ պաշլամըշ-լար վէ ասքէրիյէ գօմանտանը գաստէն տէրօլարը աշուպ, թիւրք էհալիյէ պէլիկ սիլահալար թէվի իթմիշ տիր:

Շու հալլէրտէն տօլայը գօնօ-լուլարըն քէնտի հիւքիւմէթէրի-նէ վէրաիլէրի բարօրթլարըն մասլը մուլթասարէսի շու եօլ-տա տըր: — Պու իլթիլարըն սէպէպի Սլմանպօտան արամալը տըր, զիրա ասանըն թիւրք գօ-միթէլէրի օրատան կէլէն թալի-մաթ իւզրէ հարէքէթ իթմէքտէ տիրէր: Պու ուլիւնսըզլըզլարը չըզարմագտան թիւրք հիւքիւմէ-թիին մագալտի ասլիսի շու տըր քի, Կիրիտտէ իսլամլարըն խրիս-թիյան վալի թային օլմագտան մուլալէֆէթ իթմէլէրի պէհանէ.

սի իլէ Էրմէնիսթանտա տախի
Խրիսթիան վալիէր վէ միւթէ-
սարիֆէր թալիսի միւթիւնսիդ
կէօսթէրսին : Պու պապտէ Ֆը-
րանսանն Գանեա գօնսօլոսը Ս.
Պըլան հիւքիւմէթի մէնսուպէսի-
նէ փետրվար 2տէ պիր թէլէկրաֆ
քէշիտէ իտուպ տէմիշ տիր .
« Գանեա , րէթիմօ վէ Գանտիա
շէհրէրինտէ թիւրքէրին չըգար-
տըզլարը իսթիլալ Սթանպօլտան
վէրիլէն թալիմաթ միւթիւնսիդ
հուսուլա կէլիշ օլտըղընը իսպաթ
իտէն տէլլիէր հէտիմաէ մէվճուտ
տըր : »

Թիւրք հիւքիւմէթիւնն սախ-
թէքէարլըղը պու Եօլլէ սապիթ
օլուպ , Երնանլըլար պէհապէրն
միլլէթտաշարընը մուհաֆազա Ի-
չիւն կիրիտ սուլարընա զըրհը-
լար Եօլլամայա մէհպուր օլտըզ-
լարը հալտէ , Ալմանիա հիւքիւ-
մէթի Սուլթանըն խաթըրընը խօշ
թուլթապ Իչիւն Բիւրէանըն մու-
հասէրէ ալթընա ալընմասընը
թէքիլիթ իթմիշ իսէտէ , ինկիւ-
թէքանըն մուխալէֆէթի իւզէրի-
նէ իթթիֆապ հասըլ օլմատըղըն-
տան Ալմանիա ինճիւնիշ օլմադլէ
պէրապէր , իտատսընը թասթիպ
իթմէք Իչիւն տիկէր տէվլէթլէրէ
շու Եօլտա իյդահաթ վէրմիշ տիր .
« Երնանիսթանը կիրիտ իչիւրինէ
միւտաիւլէտէն մէնն իթմէշ Իսէք
Պուլկարլարըն վէ Սըրպլարըն
տախի Սաքէտոնիայա կիրմէլէրէնէ
սէպէպիլէթ վէրմիշ օլուրըզ վէ
պու տէֆա ումուլ Եարգ մէսէլէ-
սի ալէֆլէնի : »

Պուլկարլարըն իւզէրիւնէ Թիւրքիա-
նըն թէմամիլէթիւնի սազլամադ
վէ Պուլկար վէ Սըրպ հիւքիւմէթ-
լէրինէ Թիւրքիայա դարըն հա-
րէքէթի խուսուլմէթքիարանէյէ
մէյտան վէրմէմէք գարարը տէվ-
լէթլէր պէյնիւնտէ թասթի Գը-
լընմըշ օլմադլէ իմբէրաթօր վիւ-
հէլմ զայրը մագսէտինէ վասըլ
օլմուշ ըտը . Եանի Երնանլըլարա
գարըն խուսուլմէթիւնէ վէ Սուլ-
թանա օլան մուհապպէթիւնէ մու-
գապիլ պիր սէմէրէ հուսուլա կէ-
թիւրէպիլէմէք իտի . զիրա Եու-
նանիսթան Թիւրքիայա գարըն
Եալընըզ գաշմըշ ըտը . վէ հիտ-
տէթիւնի թէսքին իթմէք պապըն-
տա Սուլթանըն մուհարէպէ իլան
իթմէսի իչիւն Պէրլինտէն իշարէթ
չէթիլտի :

Էրմէնի մէսէլէսինտէ տախի
քիւրտէրտէն միւրէքքէպ համի-
տիյէ ալալարըն թէշքիլինտէն թա-
պու կիւնէ գատար թիւրքին պա-
շըմըզա կէթիւրտիկի ֆէլաքէթ-
լէրին թէշվիդհիսի Սպաիւլ վիւ-
հէլմ հազրէթլէրի վէ քէնտի հիւ-
քիւմէթի օլտըղը բէք չօգ պիր-
հանլար իլէ սապիթ օլտըղը կիպի,
շու կիւնլէրտէ նէշը օլուան մէզ-
քիւր Սարը Տէֆթէր կիրիտ իչիւ-
րինտէ տախի Ալմանիանըն պու
հալլէրի վէ թիւրք հիւքիւմէթիւն
տախթէքիարլըզլարը պէյան իթ-
մէքտէ տիր :

Շու մէսէլէլէրտէ տիկէր տէվ-
լէթլէր Թիւրքիանըն վէ Ալմանիա-
նըն իճրա իթթիքլէրի ճիւնայթի-
լէրէ ալէթ օլտըզլարըն էլան Ի-
թիւրաֆ իթմէք իսթէմէյիպ , հա-
նօթօ-բաշանըն աղղը օլան Բարիս
կազէթալարըն քիւլլիէն թէքքի
հալլէ՝ Երնան-թիւրք մուհարէ-
պէսինտէ Պուլկարիա վէ Սըրպի-
այը հարէքէթտէն մէնն իթմէքլէ
պէօյիւք պիր ֆիթիւհաթ էլտէ
իթմիշլէր կիպի Էվրոսա գապիլէն-
լէրինն աղղըշաւմագտա տըրլար :
Էվլէթ , պէօյիւք ֆիլթուհաթ ,
գուզուլը գուրտըն էօնիւնէ պը-
րագտըլար բարալամաք իչիւն , պիլ
տախի Էվրոսա գապիլէլէրինն ալ-
զըշարըզ . նէ՝ իչիւն , քէնտիլէրինէ
լայըզ Սթանպօլտա պիր շէրիքի
ճիւնայթի պուլմուշ օլտըզլարը Ի-
չիւն :

«ԻՐԱՆԻՆՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Առ Զարեհ . — Ծանուցումները դը-
րամով կը հրատարակենք : Զրի հրա-
տարակութեան համար , պէտք է քա-
ղաքալարութեամբ խնդրիլ մասնաւոր
նամակով , փոխանակ ապառնալիք ը-
նելու խմբագրութեան , որ , այս պա-
րագային մէջ , լուծեամբ միայն կը
պատասխանէ :

ԵՆՈՒՆԱՆԻՍԹԱՆ ՎԵ ԹԻԻՐԲԻԱ

Թ Ե Ս Ա Լ Ի Ա

Էնթրանսիսթանտա աթիւտէքի օ-
գուլմուշ տըր :

« Սթանպօլ էլիլիէրի պու ալըն
14 ինտէ աղթը մէճլիս իթթիպ-
տէն սօնրա՝ խարիճիյէ նալըրը
թէվիթիք բաշայա շիֆահէն պիր
նօթա վէրիւպ , տէվլէթլէր թա-
րաֆընտան թէքիլիթ օլընան մէպ-
տէլէր իւզէրինէ միւզաքքէրէ իթ-
մէկէ Պապը Ալինին լաղը օլուպ
օլմայաճաղընա տայիր Իքի կիւն
գարֆընտա գաթիւնէ ճէվապ վէ-
րիլմէս՝նի թալէպ իթմիշլէր իտի :

Վիւքէլա մէճլիսի իսէ թիւրք
հիւքիւմէթիւն տէվլէթլէրէ վէրէ-
ճէկի ճէվապը թահթը գարարա
ալմըշ օլուպ , Սուլթանըն թաս-
տիգիւնէ իհալէ օլընաճազ իմիշ :

Իքի իւշ կիւնտէն պէրու Ալ-
մանիա էլիլիսի՝ տէվլէթլէրինն ալ-
զուլարընա իճապէթ իթմէք Ի-
չիւն Սուլթանը գանտըրմազա
շալըշմագտա տըր :

Վիէննատան Տէյլի քէլէկրաֆա
աթիւտէքի պիւրիմիշլէր տիր .

Էկէր Պապը Ալի ճուլմաա կիւ-
նիւնէ գատար ճէվապ վէրմէշ Ի-
սէ , էլիլիէր ալմըշ օլտըզլարը է-
միր Իւզըն , Պապը Ալիյէ պիր
Խալիլնարօմ վէրիւպ , թիւրքլէրին
թէսալիայը հանկը թարիխտէ
պօշալթմայա պաշալայաճաղարընա
տայիր ճէվապը գաթի իսթիյէ-
ճէքլէր իմիշ :

Վէ էկէր պու Խալիլնարօմա
տախի ճէվապ վէրիլմէշ իսէ շէ-

տիտ թէտպիլիէր էլէ ալընաճազ
տըր :

Սթանպօլտան Սթանպօլտա
պէր վէճհի աթի պիւրիլիմիշ տիր .
Թիւրքիանըն Բարիս էլիլիսի
Միւնիր պէյ՝ Ս . հանօթօնըն շու
սէօզլէրինի Սուլթանա պիւրիլիմիշ
տիր : Ս . հանօթօ տէմիշ . « գա-
թիւն միւթ թէքիլիք պուլուան տէվ-
լէթլէրին հիւսնիւ թէվլէթլէրինէ
լայըզ օլտըղընը Թիւրքիա քէնտի
հարէքէթի իլէ իպրազ իթմէկէ
կէճ գալմամալ տըր » :

Լօրտ Սօլգպէրի տախի Միւ-
նիր պէյէ ալըն լիսանը իսթի-
մալ իթմիշ :

ԹԱՋՄԻՆԱԹԸ ՀԱՐՊԻՑԷ

Սթանպօլտան Սթանպօլտա
աթիւտէքի պիւրիլիմիշլէր տիր .

Պիր իրատէ միւհիլիննէ մէճ-
լիսը վիւքէլա թազմինաթը հար-
պիյէի 8 միլիոնտան ալթը միլիո-
նա ինտիմէկէ գարար վէրմիշ
տիր : Մէքէր Իրատէ շու մէալ-
տէ իմիշ . « տէվլէթլէրինն զայրէ-
թի Եալընըզ Էվրոսանն սուլշընը
մուհաֆազա իթմէքտէն վէ Ենի
գարընըզլարըն էօնիւնի ալմազ
մագսէտինտէն իպարէթ օլտըղընա
գանի օլմըշմ : »

« Շու հալտէ Թիւրքիա տախի
սուլշէրթլէր օլտըղը սէպէպլէ պու
ուլիւնսուզ հալլէրէ նիհայէթ վէր-
մէք մէճպուրիլիթիւնտէ տիր : Պի-
նաէն ալէյս միւքին օլտըղը գա-
տար միւզաքքէրէլէրի պիթիւրմէք
Իչիւն լաղըմ՝ օլան թէտապիլիէր միւ-
րաճաթ օլընմասը վէ միւս սէհէ-
նին շէրաթիլը իպլթիտաթիւնին
բէնշէնպիս կիւնիւ իմզալանմասը-
նը վիւքէլայա էմր իտէրիմ » :

Պու հալմատիս վէրէն ինկիլիզ
մուխալի պու իշտէ պիր հիլլէ օ-
լապիլէճէկիւնի սէօյլէնմէքլէ պէրա-
պէր , մէքէր Իրատէնին սահիհ
օլտըղընը թաստիգ իտէր :

Ալման Պաթմէիս Սթանպօլտան
ալտըղը պիր թէլէկրաֆըն պէյա-
նընա նաղարէն , միւսալէհէ շէրա-
թիլ թահթը գարարա ալընուպ
Իմզալանմըշ օլտա տախի , իճրա-
աթա միւզալէրէթ օլընտըզտա
բէք չօգ միւշքիւլաթա թէսա-
տիւթ օլընաճաղը գանն օլընմագ-
տա տըր :

Կ Ի Ր Ի Տ

Պապը Ալինին կիրիտտէ Ենի-
տէն թիւրք տաքէրլէրի Եօլլամազ
թէտպիլիւնտէ պուլուանմասընա վէ
սատրազամը Էսպազ Ճէվաթ փա-
շանըն կիրիտտէքի թիւրքասաքի-
րինէ գօմանտան թալին օլըն-
մասը հազընտա սուտուր իտէն
Իրատէյէ գարըն տէվլէթլէր բրօ-
թէսթ իթթիքլէրի սէպէպլէ բա-
շաի մէքգուլմըն կիրիտէ կէօնտէր-
մէքտէն Պապը Ալինին սարֆը նա-
զար իտէճէկի պէքլէնիլմէքտէ
տիր :

Կիրիտտէ պիր խրիսթիյան թիւրք-
լէրտէն սօյուլմուշ օլմասը սէպէպլէ ,

հիւքիւմէթէ միւրաճաթ իտուպ
միւհիլիմիլէրին ճէգալանմասընը թա-
լէպ իթմիշ օլտըղընտան , Գանեալա
Խոզըն Հէրօքարօտա թիւրքլէր ա-
նըն պաշընը քէսմիլլէր տիր :



ԿՈՒՉԷՔ ԵՐԻՏԱՍՍԱՐԴԱՆԱԼ

Դիմեցէք Փ . Պօլսոյ « Կանազ Պօրիս »
հրապարակի վրայ Օթէլ Պուլկարիայի
ներքեւ թիւ 199 սափրիչի խանութը ,
ուր պիտի գտնէք՝ ճերմկած մազերը ,
մօրուքը ու պիտեքը սեւցնելու համար
Կրիւն ներկը :

Երկար փորձերէ վերջը յաջողեցալ
պատրաստել սոյն ներկը , որ տարա-
լուծուելով Առողջապահական պատ-
ժողովոյ տնօրէնութեան կողմանէ հաւ-
ստատուած է թէ ո եւ է վնասակար
նիւթ չպարունակեր եւ որուն առաջին
անգամ գործածութիւնը պիտի ապա-
ցուցանէ թէ իւր տեսակին մէջ մինչեւ
հիմալ երեւցածներէն ամենէն պերա-
զանցն է :

1—10 ԿԱՐԱՊԵՏ ԶԱՔԱՐԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ
ԿԱՄ
ՄՐՄՈՒՆՁ ՀԱՅԿԱԿԱՆ

Սոյն Երգարանը որ կը բաղկա-
նայ առաւել քան 100 երեսէ , կը
պարունակէ շատ մը հին եւ նոր ա-
զատ երգեր , զորս այժմ՝ ժողովորդն
ախորժանօք կ'երգէ :

Փափաքողք կրնան ստանալ զայն՝
փոխարէնը 1 ֆրանգի նակապարտշմ
(բօստի բուլ) խրկելով խմբագրու-
թեանս , կամ գիմելով հետեւեալ
հասցէներուն .

Տեարք
Արիս Դուրպէթ . Ռուսնուզ
Տիգրան Աճէման Երմուլ
Կարապետ Թօքսազալ . Սիլիստրէ
Մարտիրոս Գէնտիկեան Պուրկազ
Սալիկ Թօհաթեան Սիլիւն
Ալէքս . Տէմիրճիպշ . Ֆիլիպէ
Իսկէնտէր Արսլանեան Տօպրիշ
Յովհաննէս Պիպէնեան Պուրկազ
Արթ . Տէր Ղեւոնդ քնյ . Կալաք
Թէօֆիլ Թէրզեան Գէօտանէ
Ասատուր Բրուտեան Գահիլէ
Տիգրան Արսլանեան Ալէքսանտրիա
Աղգ . վարժարանաց համար՝ երբ
գէթ 10 հատ կ'ուզուի , 20 առ 100
գեղչ կը լինի :

Ա Ձ Դ

« ԻՐԱՆԻՆՔ »-Ի վարչութիւնը
յանձն կառնու պատրաստել հա-
յերէն , Պուլկարիէն , Ֆրանսիէն
եւ Յունարէն լեզուներով ընկա-
լագրեր , հասցէներ , նամակազուխ-
ներ , մահազգէք , յայտարարու-
թիւններ , հարսանեաց եւ այլ հրա-
ւերագրեր , այցաբարտեր են , են :

Գնեք չափաշար
Փափագողք պարտին զիմել խմ-
բագրութեան հասցէին :